Մահալների բնակչությունը 1823 թվին

Մահալներ	Բնակչություն (ծուխերով)			Բնակավայրեր		
	Ընդհանուր թիվը	Որոնցից		Ընդհանուր թիվը	Որոնցից	
		հայ	թուրք		գյուղ	ձմեռանոց
1. Սիսիանի	203	103	100	9	9	—
Հաջի-Աղալար-բեկի հողերի վրա	432	32	400	17	7	10
Սաֆար-Ալի-բեկի հողերի վրա	233	66	167	16	12	4
Ընդհանուր թիվը	868	201	667	42	28	14
2. Տաթևի	698	673	25	13	13	—
Հաջի-Բեգլար-բեկի հողերի վրա	150	—	150	4	2	2
Ռուստամ-բեկի հողերի վրա	447	137	310	15	6	9
Ասատ-բեկի-հողերի վրա	390	149	241	8	3	5
Ընդհանուր թիվը	1685	959	726	40	24	16
3. Կյուլպաբա	56	56	—	6	6	—
4. Աճանան-Թյուրք	67	45	22	9	9	—
5. Բարգուշատ	146	28	118	5	5	—
6. Բաղաբյուրտ	243	80	163	5	—	5
7. Փիսիան-Զավանդուր	890	10	880	35	5	30
Ընդհանուր թիվը	1402	219	1183	60	25	35
Ընդամենը՝	3955	1379	2576	142	77	65

Ղարաբաղի պրովինցիայում ցուցակագրում կատարող մասնաժողովը հաշվել է, որ ամբողջ այդ նախկին խանության մեջ բնակչության թիվը հասնում է 18 563 ծխի[9]: Այդ թվից Զանգեզուրի մահալներում ապրում էր 3 955 ծուխ—մոտ 20 հազար մարդ կամ խանության բնակչության 21,3 %-ը, մեկ հինգերորդականից ավելի: Որից հայ— 1 379 ծուխ, թուրք— 2 576. գրեթե երկու անգամ ավելի: Այդ բնակչությունը հավասարապես բաշխված չէր բոլոր մահալներում: Ամենից բազմամարդն էր Տաթևի մահալը, ապա Սիսիանինը. մնացած մահալներից Փիսիան՝ Զավնդուրինը, որը բոլորովին նոր ժամանակներում էր, գլխավորապես ցուցակագրության նախորդող կիսամյակին, դուրս էր եկել իր անմարդաբնակ և ամայի կացությունից և ընդունել էր Արաքսի հարավային ափից, Ղարադաղից վերաբնակվողների բավականին աչքի ընկնող ստվար բազմություն, արդեն բռնել էր իր բնակիչների թվով գավառում երրորդ տեղը: Դա մի վկայություն է, որ ռուսական տիրապետության միջոցին տեղական մահմեդական բնակչության մեջ մի քանի բեկերի և խաների կողմից բորբոքված թշնամական վերաբերմունքը հանդեպ ռուսական կառավարությունը արդեն 1822 թվականին բավականին կորցրել էր իր սրությունը և հեռացածները վստահությամբ վերաբնակվում էին իրենց նախկին հողերի վրա: Նույնը նկատ-

[9] Ըստ 1836 թ. հրատարակված՝ «Обозрение российских владений за Кавказом», т. III, 1836 г., СПб., էջ 268, т. IV, էջ 363: Ճշտված է կամերալ ցուցակագրությամբ 1832 թվին և հաշված է ամբողջ Ղարաբաղի պրովինցիայում՝ 18751 ծուխ 741 գյուղերում և ձմեռանոցներում.

Շուշում՝ 1 698 ծուխ:

Իսկ ըստ արական շնչերի և ազգությունների պրովինցիայում 49 792, այն է՝ 17 413 հայ և 32 379 թուրք:

Շուշում՝ 5 059, այն է՝ 2 392 հայ և 2 667 թուրք:

Ուրեմն՝ ընդամենը 20 449 ծուխ և 5 485 արական շունչ, այն է, 19 805 հայ և 35 046 թուրք: